863 Մատաղատունկի պես դուրս եկավ Նրա առաջ

1. Մատաղատունկի պես դուրս եկավ Նրա առաջ
Եվ արմատի պես՝ ծարավուտ երկրից:
Ո՛չ կերպարանք ուներ և ո՛չ էլ վայելչություն,
Եվ տեսք չուներ, որ Նրան ախորժեինք:
Նա անարգված էր, մարդկանց երեսից ընկած,
Հարվածների տեր և ցավի տեղյակ եղավ:

Նա մեր ցավերը վերցրեց Իր վրա
Եվ մեր վշտերը Նա բեռնեց Իր վրա:

2. Եվ մենք համարում էինք Նրան վիրավորված,
Աստծուց զարկված ու չարիքի հանդիպած,
Բայց Նա մեր մեղքերի համար վիրավորվեց,
Անօրենությունների համար հարվածվեց:
Մեր խաղաղության պատիժն Իր վրա եղավ,
Եվ Նրա վերքերով մենք բժշկվեցինք: